
ԲԵՌԼԻՆԻ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Գ. Հ.

Կոնգրեսի ընդունած 61-րդ հոդվածի համաձայն՝ Օսմանյան կայսրության ներքին գործերին միջամտելու իրավունք էին ստանում մեծ տերությունները, ինչը հուսալի կարգավիճակ չէր կարող ապահովել հայ ժողովրդի համար: Սան-Ստեֆանոյի պայմանագրի կնքումից մինչև Կիպրոսի համաձայնագրի ստորագրումը և ապա մինչև Բեռլինի կոնգրեսը Հայկական հարցի լուծման համար առաջարկված պայմանները ենթարկվեցին այնպիսի փոփոխությունների, որ 61-րդ հոդվածը գործնականում ոչ մի նշանակություն չունեցավ հայ ժողովրդի համար, նույնիսկ դարձավ նրա դժբախտության պատճառը:

61-րդ հոդվածում նշված չորս միջոցներից ոչ մեկը՝ բարեփոխումներ, հայերի ապահովությունը անիշխանական ցեղերից, պարբերական ծանուցումներ պետություններին և նրանց վերահսկողությունը, չգործադրվեց:

«Բեռլինի տրակտատը հայ ժողովրդի զգալի մասը թողեց թուրքերի լծի տակ: Պատմությունը ցույց տվեց, որ կապիտալիստական տերությունների այդ որոշումը ճակատագրական եղավ թուրքահայերի համար. այն նրանց մատնեց ֆիզիկական ոչնչացման»¹: Ոչ առանց չարախնդության՝ թուրք պատմաբան Է. Ուրասը փորձում էր կռահել հայերի մտադրությունները՝ հիմնավորելով Բ. Դռան թշնամական վերաբերմունքը նրանց ազգային ինքնորոշման հանդեպ, նշելով, որ հայերը մեծ հույսեր էին կապում այս վեհաժողովի հետ, ակնկալելով, որ Թուրքիայի ջախջախումը Ռուսաստանի կողմից կհանգեցնի այն բանին, որ նրանք ձեռք կբերեն վաղուց երազած անկախություն, և որ ռուս դիվանագետները, «որոնք ջանում էին իրենց նմանատիպ քաղաքական մտադրություններն իրագործել Բալկաններում, կաջակցեն հայերին՝ նրանց սեփական նպատակներն իրականացնելու գործում»²:

Բեռլինի միջազգային կոնգրեսի որոշումները հակասում էին ինչպես հարավային սլավոնական ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի անմիջական շահերին: Կոնգրեսի որոշմամբ բուլղարական իշխանությունը զրկվում էր տարածքի 2/3 մասից: Սերբիան և Չեռնոգորիան, որոնք Սան-Ստեֆանոյի պայմանագրով ձեռք էին բերել իրենց անկախությունը, նույնպես ենթարկվեցին տարածքային կրճատումների: Բոսնիան և Հերցեգովինան օկուպացվում էին Ավստրո-Հունգարական կայսրության կողմից:

Անգլիան զավթեց Կիպրոսը, Ֆրանսիան՝ Թունիսը: Ալաշկերտի հովիտը և Բայազետը անջատվեցին Ռուսաստանից: Ռուսաստանը նաև պարտավորվում էր դուրս բերել իր զորքերը Արևմտյան Հայաստանից, որից հետո ոչ միայն ձախողվում

¹ История дипломатии, т. II, М., 1963, с. 333.

² Uras E., *The Armenians in History and the Armenian Question*, Istanbul, 1988, p. 493.

էր բարեփոխումների կենսագործումը, այլև լուրջ վտանգ էր ստեղծվում հայկական բնակչության ֆիզիկական գոյության համար:

Ռուսաստանը կրեց քաղաքական և բարոյական խոշոր պարտություն եվրոպական տերությունների կողմից: Այդ պարտության ակտիվ նախաձեռնողներն ու կենսագործողներն էին Անգլիայի և Գերմանիայի ղեկավար շրջանները, որոնք գործում էին եվրոպական մյուս տերությունների համաձայնությամբ: Եվ, բնականաբար, ռուսական դիվանագիտությունը նույնպես դժգոհ մնաց Բեռլինի վեհաժողովից, քանզի վերջինս ի դերն հանեց Սան-Ստեֆանոյի պայմանագրի կարևորագույն և հիմնական կետերը: Բացի այդ, ռուս դիվանագիտության համար վիրավորական էր նաև Կիպրոսի դաշնագիրը, որով Անգլիան խոչընդոտելու էր Ռուսաստանի առաջխաղացումը Թուրքիայում³:

Իր հուշերում Բիսմարկը, խոսելով Բեռլինի կոնգրեսում եվրոպական տերությունների կողմից՝ հակառուսական պատվար կազմելու և վերջինիս մեկուսացնելու մասին, նշում է. «...կոնգրեսի որոշումները ճիշտ հասկացվեցին մեծամասնության կողմից՝ ի դեմս Ավստրիայի, Անգլիայի և Ֆրանսիայի և դրա համար էլ Գերմանիան քվեարկեց նրանց հետ միասին, և այսպիսով Ռուսաստանը մնաց փոքրամասնության մեջ»⁴:

Ռուսական պատվիրակության ղեկավար Ա. Գորչակովը կոնգրեսի աշխատանքների մասին Ալեքսանդր II-ին ներկայացրած զեկուցագրում նշել է հետևյալը. «Բեռլինի կոնգրեսը իմ ծառայողական կարիերայի ամենասևեռ է կազմում»: Իսկ Ալեքսանդր II-ը այդ զեկուցագրի վրա մակագրել է. «Նույնպես և իմը»⁵:

Կոնգրեսի որոշումները մեծ դժգոհություն առաջացրեցին Ռուսաստանի ղեկավար շրջաններում. «Բեռլինի տրակտատը Ռուսաստանում ընդհանուր զայրույթ առաջացրեց»⁶: Ռուսաստանի դիվանագիտության պարտությունը Բեռլինի կոնգրեսում պայմանավորված էր և նաև բացատրվում էր վերջինիս ռազմատնտեսական թուլությամբ:

Բեռլինի կոնգրեսից հետո այդ շրջանի հայ քաղաքական գործիչները ևս եկան այն եզրակացության, որ սուլթանական Թուրքիայի լծից Հայաստանը կարող է ազատագրվել ոչ թե եվրոպական տերություններին զանազան «աղերսագրեր» ուղղելու միջոցով, այլ ազատագրական պայքարի շնորհիվ: Հայկական պատվիրակության ղեկավար Մ. Խրիմյանի հանրահայտ արտահայտությունը երկաթե շերեփի բացակայության մասին դարձավ հաջորդ սերունդների պայքարի նշանաբանը: Մ. Խրիմյանը, որը Հայաստանի ինքնավարության հարցում մեծ հույսեր էր կապում արևմտյան խոշոր տերությունների, մասնավորապես՝ Անգլիայի հետ, հանգում է այն համոզմունքին, որ Հայաստանը կարող է ազատագրվել միայն զինված

³ Գեղամեանց Ե., Հայերի ազատագրական շարժումները ԺԹ դարում կամ Հայկական հարցի վեցերորդ շրջանը, Բագու, 1915, էջ 405:

⁴ Бисмарк О., Мысли и воспоминания, т. II, М., 1940, с. 217.

⁵ Տե՛ս Հովհաննիսյան Ռ. Փ., Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, Ե., 1965, էջ 172:

⁶ Բաղայան Խ., «Հայկական հարցը» Սան-Ստեֆանոյի պայմանագրում և Բեռլինի կոնգրեսում, Ե., 1955, էջ 133:

ապստամբության միջոցով. «Կոնգրեսի դռան վրայ գրուած էր՝ իրաւունքը ուժովինն է... քաղաքագիտութիւնը գթութիւն չունի, նա ամեն բանի մէջ շահ կփնտրէ... Իրաւունքն էլ սուրի ծայրին է: Հայաստանցիներ, սիրեցէք երկաթը, ձեր փրկութիւնը երկաթով կը լինի, այն պատուական երկաթով, որ Զեյթունի լեռներէն կելնէ... այդ երկաթով ամեն բան կշինվի, խոփ, մանգաղ, սուր, հրացան և այլն»⁷:

Բեռլինի կոնգրեսի որոշումները Արևմտյան Հայաստանի բնակչությանը հայտնի դառնալուց հետո սկսվում է զանգվածային արտագաղթ Արևմտյան Հայաստանից դեպի Ռուսաստան: Արևմտյան Հայաստանի բնակչությունը երբևիցե հույս չէր փայփայում, որ արևմտյան «Բարեբար» պետությունները կփրկեն իրեն թուրքական բնաջնջումից: 1894 թ. օգոստոսին կազմակերպվում է Մասունի ջարդը: Իսկ մեկ տարի անց՝ 1895-1896 թթ. տեղի են ունենում ջարդեր Արևմտյան Հայաստանի մյուս վիլայեթներում (Դիարբեքիր, Սեբաստիա և այլն): 1909 թ. Թուրքիան կազմակերպում է Ադանայի ջարդը:

Այս ջարդերը Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածի արձագանքն էին: Խ. Լինչը գրում է. «Ռուսաստանի պրոտեկտորատի փոխարինումը եվրոպական կոնցերտի պրոտեկտորատով հանգեցրեց նրան, որ հայ ժողովուրդը ենթարկվեց սարսափելի ջարդերի ու հալածանքների... 1894-1896 թթ.»⁸:

Գերմանական կայսեր Վիլհելմ II իր համակրությունն էր հայտնում թուրքական կառավարությանը հայկական ջարդերի առթիվ: Վիլհելմ II-ը Գերմանիայում ճնշում էր հայանպաստ ցույցերը՝ ընդդէմ հայկական կոտորածների, իսկ գերմանական մամուլի մի մասը նույնիսկ կոտորածների մեղքը բարդում էր հայերի վրա: Գերմանական իշխանությունները պաշտպանում էին սուլթան Համիդի հռչակած պանիսլամիզմի քաղաքականությունը՝ նպատակամղելով այն ընդդէմ Արևելքում իրականացվող գաղութային տիրապետության: Գերմանական որոշ գործիչներ, արդարացնելով թուրքական զավթիչների կողմից հայկական կոտորածները, գովերգում էին սուլթանական Թուրքիայի բարբարոսությունները. «Ճիշտ ես վարվում կտրիճ թուրք, դու միակ ջենտլմենն ես Արևելքում»⁹:

Անգլիան նույնպես անտարբեր էր այդ ջարդերի հանդեպ: «Ո՞վ կարող էր այն ժամանակ գուշակել... գալիքը: Ո՞ր դիւային հանճարը կարող էր նախատեսել այն հրէշաւոր դաւաճանութիւնը, որ պիտի սադրէր հայութեան դէմ սահմանադրական եւ ազատասէր Անգլիան»¹⁰: Մինչդէռ Անգլիան էր՝ ի դեմս լորդ Բիքոնսֆիլդի, հյուսում այն «չարաշուք» դավերը, որոնք հակադրում էին օսմանահպատակ քրիստոնյաներին, տրամադրում հայերին ի նպաստ թուրքերի և ընդդէմ Ռուսաստանի, «օրորելով [հայերին] բրիտանական հովանաւորութեան լայնալայն խոստումներով»¹¹:

⁷ Մշակ, 1878, N 159:

⁸ Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 411, ց. 1, գ. 234, թ. 3:

⁹ Հենրի Մորգենթաուս և հայ ժողովուրդը, Ե., 1999, էջ 4:

¹⁰ Վարանդեան Մ., Հայկական շարժման նախապատմութիւն, հ. II, Ժնն, 1913, էջ 161:

¹¹ Իզմիրլեան Կ., Հայ ժողովուրդի քաղաքական ճակատագիրը անցեալին եւ ներկայիս (քննական տեսութիւն), Պէյրութ, 1964, էջ 99:

Ըստ էության, քաղաքակիրթ Եվրոպան, ճանաչելով Հայկական հարցի գոյությունը, Օսմանյան կայսրությունում պահանջում էր սուլթանից բարեփոխումների իրագործում, սակայն չէր առաջարկում թուրքական իշխանությունների վրա ներազդման որևէ գործնական միջոց, թեպետ քաջ հայտնի էր սուլթանական բռնակալության բազմադարյա պատմությունը: 1895 թ. մայիսի 11-ին Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի կողմից Թուրքիային ներկայացվեց Արևմտահայաստանի վիլայեթներում անցկացվելիք բարենորոգումների ծրագիր (Կարինում, Բիթլիսում, Վանում, Սեբաստիայում, Դիարբեքիրում, Խարբերդում): Բայց տերություններն իրականում մտահոգված էին ոչ թե հայության կացությունը բարելավելու, այլ սեփական քաղաքական հնարավորությունները միմյանց միջև և Թուրքիայի նկատմամբ չափակշռելու և ճշտելու դիվանագիտական հնարամտություններով: Սուլթանն այս անգամ ևս մասնակի հիշյալ վեց վիլայեթներում բարենորոգումների պահանջին հակադրեց ամբողջ Թուրքիայում այդպիսիք անցկացնելու գաղափարը: Այդ ոգով էլ 1895 թ. հոկտեմբերի 18-ին Թուրքիան ստորագրեց մայիսի 11-ի ծրագիրը, որը այդպես էլ մնաց թղթի վրա՝ տերությունների դիվանագիտական եռանդի սպառման պայմաններում¹²:

Հ. Ադբաշյանը, ամփոփելով Բեռլինի կոնգրեսի արդյունքները, նշում է, որ «Սան Սթեֆանոյի և Պերլինի ժողովներուն տարբերութիւնը այն եղաւ, որ բարենորոգումներու խոստումը՝ առանց գործնականութեան անցնելու, մէկ վաւերաթուղթէն նոյնութեամբ ընդօրինակուեցաւ ուրիշ վաւերաթուղթի մը վրայ, այսինքն՝ Սան Սթեֆանոն Պերլինէն այնքան տարբեր եղաւ, որքան Դեղին սատանան տարբեր է սեւ սատանայէն»¹³:

Բեռլինի կոնգրեսում անգլիական դիվանագիտությանը հաջողվեց սեպ խրել ավստրա-գերմանա-ռուսական հարաբերությունների մեջ: Սկսած Բեռլինի կոնգրեսից՝ աստիճանաբար թուլացան, հետո սառեցին և մոայլվեցին ռուս-գերմանական հարաբերությունները: Բեռլինի կոնգրեսի արդյունքներից գոհ էին Օսմանյան կայսրության վերին խավերը, չէ՞ որ կայսրությունը պահպանվում էր:

Բիսմարկի բնութագրմամբ՝ Բեռլինի կոնգրեսի արդյունքները մեծ ներդրում էին Եվրոպայի խաղաղության և պետությունների միջև հարաբերությունները կարգավորելու գործում:

Անգլիան և Ավստրիան իրականացրեցին տարածքային նոր զավթումներ, իսկ Գերմանիան ի հայտ բերեց Եվրոպայի գործերում իր վճռորոշ դերի հետ «հաշվի նստելու անհրաժեշտությունը»:

Ինչպես նշում է Ջ. Կիրակոսյանը, «Եվրոպական կառավարությունների համար Հայկական հարցը սոսկ մի միջոց էր ուզած ժամանակ Օսմանյան կայսրության

¹² Տե՛ս Կ. Պոլսում Ֆրանսիայի, Ռուսաստանի և Անգլիայի դեսպանների հիշատակագիրը Հայաստանի բարենորոգումների վերաբերյալ (մարտ-ապրիլ 1895 թ.) և կից՝ ծրագիրը վարչական բարենորոգումների (Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Ե., 1972, էջ 130-147), Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Ե., 1981, էջ 246-250:

¹³ Ադբաշյան Հ., Հայկական հարցը երեկ և այսօր, Գահիրե, 1946, էջ 3:

զլիսին մահակը պահելու, նրա ներքին գործերին միջամտելու համար: Հայկական հարցը լուծելու և ոչ մի մտադրություն չունենի աշխարհի վերաբաժանման, նոր գաղութների նվաճման համար գոտեմարտի բռնված մեծ տերությունները»¹⁴:

Այսպիսով, Բեռլինի կոնգրեսը Հայկական հարցը դարձրեց մեծ պետությունների շահերի հետ կապված հարց՝ նրա լուծումն անհամեմատ ռեալ ճանապարհից շեղելով և ուղղելով դեպի անբարենպաստ և վերջին հաշվով կորստաբեր ճանապարհը:

Հայկական հարցի դիվանագիտական պատմությունը սկիզբ առավ հենց Սան-Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերով:

Հետագայում Լյոդ Ջորջը հայտարարել է. «Եթե չլինեք մեր չարաբաստիկ միջամտությունը, ապա հայերի մեծամասնությունը դեռ 1878 թ. Սան-Ստեֆանոյի պայմանագրով կանցներ ռուսական դրոշի պաշտպանության ներքո»¹⁵: Բայց պատմությունը «եթե» հասկացությունը չի ընդունում, պատմությունը կյանքով և արյունով գրված փաստեր են, որոնցից հնարավոր չէ հրաժարվել կամ երես թեքել, որոնց համար կարելի է գոջալ, սակայն էականը հատուցելն է:

Լյոդ Ջորջը խոստովանում է, որ «1878 թ. Բեռլինի տրակտատը մեր սպառնալի ճնշման արդյունքը եղավ և [այդ փաստը] փառաբանվեց որպես Անգլիայի մեծագույն հաղթանակ, որը «պատվավոր խաղաղություն» բերեց: Հայաստանը զոհաբերվեց և [մեր ուժերով] հաղթական զոհասեղանին դրվեց: Ռուսները ստիպված էին հեռանալ: Դժբախտ հայերը նորից ճնշվեցին իրենց հին հարստահարիչների կրնկի տակ, որոնք պարտավորվել էին բարենորոգումներ կատարել հայաբնակ մարզերում: Բոլորիս հայտնի է, թե ինչպես էին խախտվում այդ պարտավորությունները 40 տարվա ընթացքում: Բրիտանական կառավարության քաղաքականությունը, ճակատագրական անխուսափելիությամբ հանգեցրեց 1895-1897 թթ., 1909 թ. Սարսափելի սպանդին և 1915 թ. ահավոր կոտորածին»¹⁶:

Հայ ժողովուրդը մեծ հույսեր էր կապում Բեռլինի վեհաժողովի հետ՝ ակնկալելով լուծում ստանալ չարչրկված Հայկական հարցին: Ինչպես յուրաքանչյուր պատմական իրադարձություն, այն նույնպես լայն արձագանք ստացավ թե՛ քաղաքական շրջաններում, թե՛ անհատների սրտում: Հայ ժողովուրդը Հայկական հարցի լուծումը ձեռք բերեց տխրահոյակ վիճահարույց 61-րդ հոդվածի տեսքով, որը ճակատագրական դարձավ նրա պատմական զարգացման համար: 61-րդ հոդվածը ոմանց խոր հիասթափություն պատճառեց, մյուսներին՝ անհիմն ոգևորություն: Կարծիքները երբեմն իրարամերժ էին, տեղիք էին տալիս կրքոտ բանավեճերի: Կարծիքների այս խայտաբղետ խճապատկերում փորձենք կարևորել մի քանիսը:

Բնականաբար, վեհաժողովի արդյունքները քննարկվեցին Կ. Պոլսի Ազգային ժողովում՝ առաջացնելով կրքերի բախում: Ազգային ժողովի երեսփոխան Թ.

¹⁴ Կիրակոսյան Ջ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 70-ական թթ.), Ե., 1978, էջ 297-298:

¹⁵ Джордж Л., Правда о мирных договорах, т. II, М., 1957, с. 390.

¹⁶ Նույն տեղում:

Պեկյանը լուրջ մեղադրանքներ էր ներկայացնում Ներսես Վարժապետյանին՝ գտնելով, որ հայ ժողովուրդն իր ազգային կամքը պիտի հայտնեի Եվրոպային՝ «օրինաւոր և հանդիսաւոր կերպով», և դժբախտաբար, այդ ազգային իսկական և անկեղծ կամքը ցուցաբերելու փոխարեն, «տարբեր կամք յայտնեցին Եւրոպայիոյ, իսկ Քօնկրէիին բնավ կամք չներկայացուցին պաշտօնապէս»՝ ավելացնելով այն փաստը, որ հարցի լուծումը փնտրելիս քաղաքական սխալներ գործեցին՝ հետևելով այս կամ այն քաղաքականությանը¹⁷։ Թ. Պեկյանը փաստում էր, որ դարեր ի վեր հայ ժողովուրդը չեզոքության քաղաքականություն էր որդեգրել, որը բխում էր ազգի «հպատակութեան վիճակէն և ժամանակին ու պարագաներուն պահանջմունքէն»¹⁸, սակայն պատմական իրադարձությունների զարգացման հետևանքով ի հայտ եկավ Արևելյան խնդիրը, և այդ օրհասական պահին հարկ եղավ, որ հայերը վերանայեն չեզոքության քաղաքականությունը և իբրև արևելյան ազգ՝ «իր կրած աղէտից վախճան հայցէն»¹⁹։

Օսմանյան կառավարությունը, որը մինչ այդ չէր ուզում որևէ զիջում անել, ռուս-թուրքական պատերազմից հետո, ելնելով եվրոպական քաղաքականության մեջ տեղի ունեցած փոփոխություններից, Արևելյան խնդրի լուծմանը բոլորովին ուրիշ ուղղություն տվեց, և Ներսես պատրիարքը այս պարագաներում փորձեց պահանջել հայերի համար այն, ինչ որ ուրիշ ազգեր էին պահանջում²⁰։ Հայ ժողովրդի ձգտումներն ու պահանջը արդար էին և բխում էին նրա կենսական շահերից, սակայն եվրոպական քաղաքականությունը առաջարկեց իր շահերից բխող լուծումը։ Սա էր պատմական իրողությունը, մինչդեռ Պեկյանը Ազգային ժողովի 1878 թ. հոկտեմբերի 6-ի նիստում հրապարակավ մեղադրեց Ներսես Վարժապետյանին՝ մեջբերելով նրա խոսքերը առ այն, որ օսմանահպատակ հայերը զանգատ չունեն կայսրության հանդեպ, իսկ հայ անհատները անգամ ընդգրկված են օսմանյան վարչական համակարգում²¹։ Այդ ճառով պատրիարքը հանդես էր եկել Անգլիայի դեսպան Լայարդի առջև դեռ 1877 թ. ապրիլի 14/26-ին՝ դիմելով. «Մայրաքաղաքիս և գաւառաց մէջ... հայերը զանգատ ընելու բնաւ բան մը չունենալով, մինչեւ իսկ Հայոց անհատներէն Տէրութեան բարձր աստիճաններուն արժանացող շատեր գտնուելուն...»²² ձևակերպումներին։ Այստեղից Պեկյանը հետևություն է անում, որ «այս խոսքերը ամբողջապէս անգոյիական խորհրդարանին կապույտ տետրակին մէջ անցնելով, եվրոպական բոլոր դահլիճներուն առջև ելան և իրենց ազդեցությունն ըրին», իսկ քանի որ ազգը զանգատվելու պատճառ չունի, առանձնաշնորհ պահանջելու իրավունք չունի նույնպէս²³։ Ուստի, ըստ Պեկյանի, Բեռլինի վեհաժողովի վերաբերմունքը Հայկական հարցի նկատմամբ պայմանավորված էր Ներսես պատրիարքի սխալ քաղաքականությամբ,

¹⁷ Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, Կ. Պօլիս, 1878, էջ 159։

¹⁸ Նույն տեղում, էջ 160։

¹⁹ Նույն տեղում։

²⁰ Նույն տեղում։

²¹ Նույն տեղում, էջ 172-173։

²² Նույն տեղում, էջ 172։

²³ Նույն տեղում, էջ 172-173։

որով առաջնորդվում էին նաև անգլիական քաղաքական գործիչները, ինչի մասին է վկայում Պեկյանի կողմից մեջբերվող Սոլսբերիի՝ Լայարդին ուղղված նամակը, որը թվագրած էր մայիսի 30-ով. «Ինքնակառավարության ընդունակություն և անկախության փափաք չունին, բայց իրենց հանգստությունն ու քաղաքական բարեկեցության յույսերը բոլորովին սուլթանին կառավարության պարտական են»²⁴:

Քննադատելով Ներսես Վարժապետյանին և Խրիմյանին՝ Պեկյանը փաստում է, որ վեհաժողովի արձանագրությունները վկայում են այն իրողության մասին, որ հայոց գրությունները օրակարգում անգամ ընդգրկված չեն եղել, և ո՛չ Վադինգտոնը, ո՛չ էլ ուրիշ մի ներկայացուցիչ չներկայացրեցին Հայկական խնդիրը վեհաժողովին, այլ պարզապես Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածի վերաբերյալ վեհաժողովի մասնակիցները հայտնեցին իրենց կարծիքը և սեփական շահերի համաձայն՝ սրբագրեցին 16-րդ հոդվածը՝ վերածելով այն 61-ի, որը գործնականում չէր կարող լուծել արևմտահայության կենսական խնդիրները²⁵: Մինչդեռ Ներսես Վարժապետյանը չէր կիսում Պեկյանի կարծիքը 61-րդ հոդվածի վերաբերյալ՝ գտնելով, որ թե՛ 16-րդ, թե՛ 61-րդ հոդվածները «երկուքն ալ ի չգոյէ յառաջ եկած [են]»²⁶, շեշտելով, որ երկուսն էլ հավասարաչափ արժանի են շնորհակալության: Առարկելով Թ. Պեկյանին՝ Ներսես պատրիարքը տխուր, բայց և միաժամանակ սպառնալից հայտարարություն արեց. «Ոչ Անգղիոյ քաղաքականութիւնը մեք կրնամք փոխել և ոչ Ռուսիոյ. պարապ խօսքեր են բոլոր ըսածներդ»²⁷: Ահավասիկ այն դառը ճշմարտությունը, որի հետ չէր կարող հաշտվել հայ ժողովուրդը: Երեսփոխանները չաջակցեցին Պեկյանի քննադատական ելույթներին, քանի որ գիտակցում էին պատրիարքի վարած քաղաքականության ճշմարտացիությունը: «...Այս դարուս մէջ շահը միայն կը խօսի և մանաւանդ շահը միայն պիտի խօսի այն ծերացեալ ու գործոց մէջ կարծրացեալ քաղաքագիտաց ակումբին մէջ որ պիտի գումարէր ի Պերլին»²⁸. այսպես որակեց Ներսես Վարժապետյանը եվրոպական շահախնդրական դիվանագիտությունը, որի դեմ նա հարկ համարեց բողոքել եվրոպական պետությունների դեսպաններին, քանի որ «բողոքը տկարին իրավունքն է»²⁹: Հայ բարձրաստիճան հոգևորականությունը և Ազգային ժողովի երեսփոխանները սատար կանգնեցին պատրիարքին, որի դիրքորոշումը ճիշտ էր և բխում էր ազգային քաղաքականության շահերից:

Ներսես Վարժապետյանը՝ տոգորված ազգի ապագայի հետ կապված իդեերով, գտնում էր, որ, այնուամենայնիվ, 61-րդ հոդվածի առկայությունը ոչ թե կորուստ էր, այլ ձեռքբերում, քանի որ առաջին անգամ հայ ժողովուրդը հիշատակվեց միջազգային դաշնագրության մեջ՝ և կոչ անելով հարատև շարունակել սկսած գործը, քանի որ նման գործեր մեկ օրում չեն արվում: Կյանքի բովով անցած և

²⁴ Նույն տեղում, էջ 175:

²⁵ Նույն տեղում, էջ 177:

²⁶ Նույն տեղում:

²⁷ Նույն տեղում, էջ 182:

²⁸ Նույն տեղում, էջ 65:

²⁹ Նույն տեղում, էջ 67:

իմաստնացած պատրիարքը եկել էր այն համոզման, որ «...դժբաղդությունն է միայն և մահ, որ յանկարծակի կրնան գալ անձի մը և ազգի մը վրայ. կեանքն ու բարեկեցությունը յամր կը ձևանան»³⁰:

«Բերլինի վեհաժողովը հիասթափությունների մի ամբողջ գումարում էր ամենից առաջ և ամենից շատ Ռուսաստանի համար, որ զգաց իրան խաբուած, յաղթողի իրաւունքներից զրկուած... Շատ ուժեղ էր հիասթափությունը և հայութեան մէջ:»³¹, - գրում է Լեոն: «Բերլինում հայերը ավելին էին ցանկանում, քան նրանց հատկացվել էր 16-րդ հոդվածով: Ավելին ստանալու փոխարեն նրանք ավելի շատ կորցրեցին արդեն ձեռք բերածից», - փաստում է Ա. Սարգսյանը³²: Բերլինում կրած պարտությունը Ա. Չոպանյանը բացատրում էր նրանով, որ «հորիզոնին վրայ կար միայն եւ միայն ռուսական պաշտպանութեան նշոյլը, որ հեռու էր իտէալ լուծումն ըլլալէ, բայց միակ դրականն էր... թուրքին ձեռքը մնալէն հազար անգամ գերադասելի»³³: Իսկ Մ. Չերազը, վերլուծելով հայկական պատվիրակության պարտության պատճառները, նշում է, որ հայ դիվանագետները չէին կարող մրցել ո՛չ ռուս և ո՛չ էլ եվրոպական խորամանկ դիվանագետների հետ³⁴: Ա. Նելիդովը, որը մասնակցում էր կոնգրեսին իբրև ռուս պատվիրակության փորձագետ-խորհրդական, Ն. Իգնատսին ուղղված իր նամակում կարծիք է հայտնում, որ «եթե մենք հաստատական լինեինք և ցույց տայինք նրանց մեր ատամները և բռնցքները, մեր հակառակությունը կնվազեցներ նրանց ամբարտավանությունը»³⁵, իսկ Իգնատսը անհաջողության պատճառն էր համարում Գորչակովի համառությունը. «[Գորչակովը] հիշողությունը կորցրել է, ի վիճակի չէ ընկալել առաջարկությունների իմաստը և դրանց երանգավորումը... դրա հետ մեկտեղ մեր լիազորներից ոչ մեկը Արևելքը չի ճանաչում»³⁶: Իգնատսը շատ խորն էր ապրում Բերլինի կրախը՝ «Բերլինում մնացին միայն այն կառույցի փլատակները, որ ստեղծվել էր Սան-Ստեֆանոյում»³⁷, իսկ Ռուսաստանի «զիջումները Ավստրիային և Անգլիային պետք էին վերջինիս, որպեսզի Անգլիան պահանջի Թուրքիայից Կիպրոսը և հայաբնակ մարզերում տիրելու իրավունքը»³⁸: Խորեն Նար-Պելը խորապես զոջում էր, որ Իգնատսը չէր մասնակցել կոնգրեսի աշխատանքներին՝ ակնկալելով հայերի համար հարցի բարենպաստ լուծում. «Բոլորից լավ դուք կարող էիք մեզ պաշտպանել և նկարագրել մեր դժբախտ վիճակը... բոլորից լավ դուք էիք միայն ընդունակ ավարտել մեր ազատագրումը, որը այդքան լավ էիք ձեռնարկել... ապագա պատմաբանը կասի, որ գեներալ Իգնատսին է պատկանում հայերին

³⁰ Լեո, Հայոց հարցի վաւերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 128:

³¹ Նույն տեղում, էջ 110:

³² Sarkissian A. O., *History of the Armenian Question to 1885, Urbana, 1938, p. 83.*

³³ Չոպանեան Ա., Ստեփան Փափագեանի յուշատետրը (Անահիտ, 1907, N 10-12, էջ 168):

³⁴ Չերազ Մ., Հայկական խնդիր, Վենետիկ, 1917, էջ 2:

³⁵ После Сан-Стефано (Записки гр. Н. П. Игнатьева с примечаниями А. А. Башмакова) (Исторический вестник, 1916, т. 144, май, с. 331-332).

³⁶ Նույն տեղում, էջ 332:

³⁷ Նույն տեղում, էջ 335:

³⁸ Նույն տեղում:

առաջին անգամ եվրոպական պայմանագրի մեջ ընդգրկելու պատիվը և ստիպելու թուրք հարստահարիչներին՝ պաշտոնապես ընդունել... մոռացված քրիստոնյա ժողովրդի գոյությունը...»³⁹: Երբ 1878 թ. օգոստոսին Իզմատներ Պետերբուրգ ժամանեց անձնական գործերով և ներկայացավ կայսրին, կայսրը դիմեց նրան դառն հարցադրումով. «Լավ հյուրասիրեցին չե՞լ ինձ Բեռլինում: Սան-Ստեֆանոյի պայմանագիրը ահագին թըլպատեցին»⁴⁰: Իզմատներ փաստեց, որ իր պայմանագրից գրեթե ոչինչ չմնաց. «Ամբողջ համա ու հոտը կորավ, քանի որ Սան-Ստեֆանոյի դաշնագիրը պատրաստվել էր «ռուսական սոուսով», իսկ Բեռլինինը՝ ավստրա-հունգարական»⁴¹:

Հայ միջավայրում հուսահատ տրամադրությունները հետզհետե փոխակերպվեցին հուսալի մտայնություններով, որոնց հիմնաքարը դրեց Ներսես պատրիարքը՝ 1878 թ. ամռանը Ազգային ժողովում արտասանած իր հանրահայտ ճառով, որը հայ ժողովրդի քաղաքական իդեալների համար ճանապարհ և ծրագիր էր եզրագծում⁴²:

Ա. Ալպոյաճյանը 61-րդ հոդվածը «երազ» անվանեց: Այս առիթով Մ. Չերազը գրում է, որ «... շատ արդար չէ «երազ» նկատել 61-րդ յօդվածը, քանի որ իրմե ծնալ Մեկրի դաշնագիրը»⁴³: Ա. Ալպոյաճյանը նվազեցնում էր Ներսես պատրիարքի դերը և ջանքերը՝ Հայոց խնդիրը լուծելու հարցում՝ համարելով Ներսեսին Համիդի կամակատար⁴⁴: Սակայն պատրիարքի ներկայացուցիչները ազգասեր հայեր էին, որոնք գործիք չդարձան ոչ սուլթանի և ոչ էլ այս կամ այն օտար պետության ձեռքում: Եվ հենց այդ իսկ պատճառով Համիդը հրամայեց Ներսեսին, որպեսզի նա հետ կանչի պատվիրակներին, և վերջինս արհաբար մերժեց նրան⁴⁵: Մեղադրանքներ ներկայացնելով հայ պատվիրակությանը՝ ի դեմս պատրիարքի, հայ ազգային գործիչներն անտեսում էին այն կարևոր փաստը, որ Բեռլինը սակարկության հսկա շուկա էր դարձել⁴⁶, որտեղ ճշմարտությունը ուժեղի կողմն էր, իսկ իրավունքը, Բիսմարկի խոսքերով ասած՝ հզորինն է: Մյուս կողմից կային և անտեղի ոգևորվողներ: Մ. Չերազի կարծիքով, հայերը շատ ավելի շահեցին Բեռլինում, քան Սան-Ստեֆանոյում⁴⁷: Մանրամասն վերլուծելով 16-րդ և 61-րդ հոդվածները՝ նա գտնում էր, որ ի տարբերություն Սան-Ստեֆանոյի հոդվածի, ըստ որի՝ Բ. Դուռը հանձն էր առնելու պաշտպանել հայերին «անդ ուր բանակած էին ռուս զունդերն», և այս խոստումը տարածվում էր մասնավորապես Կարինի վրա, 61-րդ հոդվածով

³⁹ Խորեն Նար-Պեյի նամակը Ն. Պ. Իզմատներին՝ թվագրված 1878 թ. մայիսի 24-ով (նույն տեղում, էջ 336):

⁴⁰ Նույն տեղում, էջ 341:

⁴¹ Նույն տեղում:

⁴² Լեօ, նշվ. աշխ., էջ 111:

⁴³ Չերազ Մ., Ազգային խնդիրներ, Պարիս, 1927, էջ 9:

⁴⁴ Նույն տեղում, էջ 39:

⁴⁵ Նույն տեղում, էջ 40:

⁴⁶ Նույն տեղում:

⁴⁷ Չերազ Մ., Թե ինչ շահեցանք Պեռլինի վեհաժողովէն, Կ. Պոլիս, 1878, էջ 17:

Բ. Դուռը հանձն առավ պաշտպանել հայերին բոլոր հայաբնակ նահանգներում⁴⁸: Ընդ որում, Սան-Ստեֆանոյում, պատասխանատվություն ստանձնելով Կարինի ներկայի համար, Բ. Դուռը Բեռլինում ստանձնեց այդ պատասխանատվությունը Հայաստանի ներկայի և ապագայի համար՝ եզրակացնելով, որ այս առումով այդ երկու հոդվածների «տարբերությունը անհուն էր»⁴⁹:

Մ. Չերազը մատնանշում է ևս մի՝ իր տեսակետից կարևոր հանգամանք. եթե ըստ 16-րդ հոդվածի՝ Բ. Դուռը Ռուսաստանին խոստանում էր պաշտպանել հայերին քրդերից ու չերքեզներից, ապա 61-րդ հոդվածով Բ. Դուռը արդեն ողջ Եվրոպային խոստացավ պաշտպանել հայերին այդ երկու ցեղերից: Բեռլինի հոդվածի մյուս դրական կողմը, ըստ Չերազի, այն էր, որ Սան-Ստեֆանոյի հոդվածում Հայ դատը ներկայացված էր անուղղակի, մինչդեռ Բեռլինյան հոդվածը «ուղղակի ներկայացուց մեր դատ, իբր հայ ազգի իրաւունքն մի լաւագոյն վիճակի»⁵⁰: Իբրև դրական ձեռքբերում, որը «չունի սահման», Մ. Չերազը շեշտում է այն փաստը, որ 61-րդ հոդվածով Բ. Դուռը պարտավորվում էր Եվրոպային հաղորդել այն միջոցների մասին, որոնք պիտի ձեռնարկվեին հանուն հայերի ապահովության, այսինքն՝ Բ. Դուռը հաշվետու էր եվրոպական աշխարհի առջև: Եվ քանի որ Բ. Դուռը պարտավորվում էր պարբերաբար հաղորդել Եվրոպային իր կողմից ձեռնարկվող՝ հոգուտ հայերի միջոցների մասին, ուրեմն նա «միշտ պիտի հարկադրուի բարենորոգումներ շնորհել Հայաստանին»⁵¹: Մ. Չերազը ոչ պակաս կարևորում էր նաև 61-րդ հոդվածում տեղ գտած վեց պետությունների հսկողությունը՝ հայ քրիստոնյաների կացությանն ուղղված «բարեկարգական միջոցների» հարցում՝ վերջ դնելով 1856 թ. Փարիզի դաշնագրում տեղ գտած անարդարությանը, հնարավորություն տալով Եվրոպային՝ այսուհետև միջամտել Հայաստանում իրագործվելիք բարեփոխումներին: Հիմնվելով 1878 թ. հունիսի 26-ի անգլո-թուրքական համաձայնագրի վրա, որով Թուրքիան խոստանում էր Անգլիային ասիական Տաճկաստանում իրագործել անհրաժեշտ բարենորոգումներ՝ դրա դիմաց հանձնելով նրան Կիպրոսը, Չերազը եզրակացնում է, որ եվրոպական հավաքական պատասխանատվությանը գումարվում է ևս մի՝ անհատական բրիտանական պատասխանատվություն, որը ավելի զորեղ էր:

Խանդավառությամբ է վերաբերվում Չերազը նաև 1878 թ. մայիսի 23-ի անգլո-ռուսական համաձայնագրին, քանի որ այս պայմանագրով «ռուս և բրիտանական ազդեցությունները պիտի մրցին այսուհետև Հայաստանի մէջ, եւ հայ տարրն օգուտ պիտի քաղէ այս մրցումէ»⁵²: Ապավինելով անգլո-ռուսական դաշինքին՝ Չերազը հույս էր տալով, որ Ռուսաստանը կհաղորդի եվրոպական տերություններին տեղի ունեցող կեղեքումների մասին, պատասխանատվությունը զգելով իր հակառակորդի՝ Անգլիայի վրա, Անգլիան էլ, իր հերթին, քանի որ իրավասու չէ արգելելու

⁴⁸ Նույն տեղում, էջ 17:

⁴⁹ Նույն տեղում, էջ 18:

⁵⁰ Նույն տեղում, էջ 19:

⁵¹ Նույն տեղում, էջ 20:

⁵² Նույն տեղում, էջ 23:

ռուս միջամտությունը Հայաստանում, կջանա սանձել հարստահարությունները՝ բարոյական պարտությունից խուսափելու նպատակով: Ամփոփելով իր խոսքը 61-րդ հոդվածի մասին՝ Մ. Չերազը արձանագրում է, որ թեև Եվրոպան չտվեց Հայաստանին վարչական ինքնօրինություն, սակայն շնորհեց մի հոդված, «որ կրնայ աստիճանապես տանիլ ըզմեզ ուր կը ցանկայինք հասնիլ»⁵³, քանզի վեհաժողովից հայերը մի ոսկեհանք շահեցին, որտեղից պիտի խիզախություն ունենան ոսկին հանել⁵⁴: Միևնույն ժամանակ տեսնելով Բեռլինի վեհաժողովի անարդյունք «արդյունքները»՝ Չերազը վերապահում է. «Կ'հաւատայինք թէ, եթէ գործադրուէր, հայ ժողովուրդը պիտի կարենար շունչ առնել, թէւ բողոքեցինք՝ ազգին ինքնավարութեան իրաւունքը վերապահելու համար: Յանցանքը մերը չէ եթէ չգործադրուեցաւ»⁵⁵:

Մ. Չերազի ոգևորությունը կիսում էր նաև արքեպիսկոպոս Նար-Պեյը, որը հաջողություն էր համարում սոսկ այն փաստը, որ առաջին անգամ հայի անունը ձեռք բերեց քաղաքական նկարագիր, և Հայկական հարցը, դառնալով միջազգային հիմնախնդիր, ընդգրկվեց միջազգային պայմանագրի մեջ. «Կարելի չէր ընդունիլ աւելի քան զոր ընդունեցանք»⁵⁶: Համադրելով կյանքի և բնության օրենքները՝ Նար-Պեյը մխիթարական էր համարում այն իրողությունը, որ Բեռլինում «սերմ սերմանեցինք, տունկ մըն է զոր ձեռք բերինք»⁵⁷, և ելնելով բնության օրենքներից, հնարավոր չէ միանգամից և՛ սերմանել, և՛ հունձը վայելել: Նար-Պեյը ճշմարտացիորեն նկատում է, որ հայ պատվիրակությունը չէր կարող Բեռլինում «դեպքերը հեղաշրջել» և փոփոխել հանգամանքները, ինչպես չկարողացան այդ անել նույնիսկ հզոր պետությունների դեսպաններն ու դիվանագետները: «Մեծագոյն կենցաղագիտութիւնը՝ ժամանակին հանգամանքները ճանաչելն է և դէպքերէն օգուտ քաղելը»⁵⁸, - այս դիտարկումով որակավորեց վեհաժողովի արդյունքները Նար-Պեյը: Ե՛վ Չերազը, և՛ Նար-Պեյը շարունակում էին մնալ Բեռլինի կոնգրեսում (ավելի ճիշտ՝ ընդունարանում), ընդամին, նույն միամիտի և պարզունակի կարգավիճակով, թեև վեհաժողովը վաղուց ի վեր փակվել էր, իսկ նրա պատվավոր մասնակիցները՝ ցրվել իրենց մայրաքաղաքները՝ մտմտալով արդեն միջազգայնացած Հայկական հարցից հետագա քաղաքական եկամուտներ կորզելու խնդիրների վրա: Իրենց հերթին, վեհաժողովի վրա կրքոտությամբ խաչ էին քաշում նրանց ժամանակակից հակառակորդները՝ նկատի ունենալով կա՛մ Հայկական հարցի միջազգայնացման վնասակար հետևանքները և կա՛մ այդ հարցի ոչ բավարար չափերով միջազգայնացումը:

Հակոտնյա էր Լեոյի տեսակետը, որը պատրանք էր համարում պետությունների մարդասիրությունը և անշահասիրությունը. «Ձգացումներով և երեւա-

⁵³ Նույն տեղում, էջ 25:

⁵⁴ Նույն տեղում, էջ 29:

⁵⁵ **Չերազ Մ.**, Ազգային խնդիրներ, էջ 37:

⁵⁶ Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, էջ 214:

⁵⁷ Նույն տեղում:

⁵⁸ Նույն տեղում:

կայությունը տարած հայութիւնը 61-րդ յօդուածի մէջ գտաւ այն խորհուրդը թէ՛ այսուհետեւ Հայաստանը դարձաւ Եւրոպայի հզօր պետութիւնների մտահոգութեան առարկան»⁵⁹։ Լեոն քննադատում էր Ներսէս Վարժապետյանի մոտեցումը վեհաժողովում կրած պարտության նկատմամբ՝ գտնելով, որ պատրիարքը զբաղվում էր ինքնախաբէությամբ, քաջալերելով հայ ժողովրդին չվհատվել և 61-րդ հոդվածը ներկայացնելով որպէս «արժեքավոր նվաճում»⁶⁰։

Գ. Օսյանը նույնպէս տարակուսում էր 61-րդ հոդվածի արդյունավետության վերաբերյալ՝ նշելով, որ հայերին հաջողվեց ընդգրկել 61-րդ հոդվածը Բեռլինի պայմանագրի մէջ, սակայն հազիվ թէ նրանց հաջողվի ջնջել այն⁶¹, քանի որ հոդվածը «բոլորովին վնասակար է Հայկական հարցին համար»⁶²։ Իսկ Մերվիչենը խոստովանում էր, որ հայերը սխալվեցին միամտության և խաբված լինելու պատճառով⁶³։

Բեռլինի վեհաժողովի հետքերով ում Ռափայելյան Փարիզից գրում է Մ. Խրիմյանին. «Բայց ցաւալին այն է, որ մեր քաղաքագէտները դէռ խոր քնոյ մէջ կխորթան, գլուխնին միայն Անգղիոյ դարձուցեր եւ ամէն բան անկէ կսպասեն, այն մէծ սխալանաց հետեւանքը ակներեւ տեսան Պերլինի վեհաժողովոյ մէջ եւ դէռ չեն խելաբերիր, ասով ըսել չեմ ուզեր, որ Անգղիոյ օձիքը թողուն, բայց քանի որ արեւելեան քրիստոնէից ապագայն չէ թէ միայն Անգղիայէ, այլ համայն Եւրոպիոյ կառաւարութիւններէ կախեալ է, ուրեմն մենք պէտք է ամէն հնարաւոր միջոցներով ջանանք, որ ամբողջ Եւրոպիոյ համակրութիւնը գրաւենք»⁶⁴։ Քննադատելով հայ քաղաքագէտների անգլիասիրությունը՝ նամակագիրը որոշ հայ քաղաքական գործիչների նման Հայկական հարցի լուծումը կապում էր Եվրոպայի բարյացակամ վերաբերմունքի հետ։

Մտորելով Բեռլինի վեհաժողովի արդյունքների մասին՝ դրանք զուտ ռուս-անգլիական հակամարտությունների իրողությամբ էր բացատրում «Մշակի» խմբագիրը՝ Հայկական հարցում ռուսական նահանջը վերագրելով անգլիական շահամետ քաղաքականությանը։ Գր. Արծրունին նշում էր, որ Ռուսաստանի

⁵⁹ Լեո, Թիւրքահայ հեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հ. Ա, Փարիզ, 1934, էջ 59։

⁶⁰ Ներսէս պատրիարքի հանրահայտ ելույթը 1878 թ. օգոստոսի 2-ին, որ տեղի ունեցավ Ազգային ժողովի նիստում, և որում նա հորդորում էր «պատրաստվել... ապագային... Հայաստան դրկենք, ինչ որ ունենք ազգին մէջ բանիմաց, տաղանդաւոր ու ազգասէր, ուսումնասէր եկեղեցականներ... [քանի որ] ուղիներ պիտի բացւեն, ջրանցքներ պիտի շինուեն, գործարաններ պիտի կառուցուեն...» և այլն, Լեոն որակում է իբրեւ «բանաստեղծութիւն, ռոմանտիկ երազատեսութիւն, և ոչ թէ քաղաքական գործիչի լուրջ զեկուցում» (նույն տեղում, էջ 95)։

⁶¹ Օտէան Գր., Մահմանադրական խօսքեր ու ճառեր, Կ. Պոլիս, 1910, էջ ԺԵ։

⁶² Օգանէան Գ., Հայապատում, Հայուն պատմական դերը, Բէյրութ, 1969, էջ 140-141։

⁶³ Նույն տեղում, էջ 141։

⁶⁴ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Թ. Ազատյանի ֆոնդ, բաժին XII, 9863։ Արտաքին ուժերին ապավինելու մասին է վկայում արխիվային ևս մի փաստաթուղթ՝ թվագրված 1877թ. օգոստոսի 11-ով, որում ում Ս. Փեշտիմալճյան խնդրում է կազմել վերջին 3 ամսվա ընթացքում հայերի նկատմամբ իրագործված բռնությունների՝ հարստահարությունների և սպանությունների, ցանկը, նշելով տեղը, թվականը, անունները և ոճրի տեսակը՝ եվրոպական տերություններին «ստուգապէս» տեղեկացնելու համար (ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆոնդ, բաժին XII, 11224)։

շահերը պահանջում էին քաղաքականացնել հայ իրականությունը, իսկ Անգլիայի շահերը թելադրում էին խեղդել հայ ժողովրդի քաղաքական կյանքի ձգտումները. «Այժմ պարզ երևում է, որ Ռուսաստանի շահերը պահանջում էին քաղաքական կյանք տալ Հայաստանին, իսկ Անգլիայի շահերը պահանջում էին խեղդել Հայոց ազգի մեջ ձգտում դեպի քաղաքական կյանքը»⁶⁵:

Վեհաժողովի արդյունքները ոչ միայն չարեցին Եվրոպայի հասարակական կարծիքը Հայկական հարցի վերաբերյալ, այլև մատնեցին այն անտարբերության և լռության. 1881 թ. մայիսի 31-ով թվագրված մի նամակում Անդ. Արծրունին գրում է Գր. Արծրունուն (Քյունսախտից) Հայաստանի հանդեպ Եվրոպական հասարակայնության անտարբերության մասին. «Լրագիրներից դժբախտաբար չէ երեւում, որ Թիւրքիայի մեջ կամ եւրոպական տերութիւնները զբաղէին Հայաստանի հարցով: Բոլորովին լուռ է հասարակական կարծիքը դրա մասին, սառնահոգութեամբ ու անտարբերութեամբ վերաբերում է դեպի այդ հարցերը»⁶⁶: Նման իրողության մասին է վկայում Անդ. Արծրունու ևս մի նամակ՝ գրված կես տարի անց և դարձյալ հասցեագրված Գր. Արծրունուն 1881 թ. դեկտեմբերի 15-ին. «Բայց եթէ գիտնայիր ինչպիսի անտարբերութիւն յատուկ է այստեղի լրագիրներին... Չգիտեմ, նրանց չէ հետաքրքրում հեռաւոր երկիրը, կամ նրանց համար նշանակութիւն ունի միայն այն, ինչ-որ սաստիկ սկանդալ է յառաջացնում կամ սէնսացիա... Ամէն բան, ինչ որ Կովկասի կամ Հայաստանի մասին տալիս եմ, չէ տպւում»⁶⁷: Սա էր ճշմարտութիւնը, որ ձեռքերի ազատություն էր ապահովելու օսմանյան պետության համար՝ բոլորին պարտադրելով խնդրի լուծման ի՛ր միջոցները: Սա էր ճշմարտությունը ոչ միայն Շվեյցարիայում կամ Գերմանիայում, Անգլիայում, այլև ամբողջ Եվրոպայում, նույնիսկ Ռուսաստանում, որը 1880-ական թթ. թշնամական կեցվածք ընդունեց Հայկական հարցի նկատմամբ՝ ըստ ամենայնի խոչընդոտելով դրա հայանպաստ զարգացումները: Միջազգային քաղաքականության մեջ, այսպիսով, արդեն ընդարմացած Հայկական հարցը մեկընդմիջտ վերացնելու մտահոգացումը սևեռուն գաղափարի էր վերածվում օսմանյան քաղաքականության մեջ: Բեռլինի վեհաժողովից անմիջապէս հետո սկսեցին ուրվագծվել այդ քաղաքականության գործնական դրսևորումները, որոնք սանձազերծվելու էին 1890-ականի կեսերին՝ հայերի կոտորածների տեսքով:

Տարիներ անց Ռուեն-Ժեկմենը գրում էր, որ Բեռլինի վեհաժողովի խնդիրն էր Սան-Ստեֆանոյի թուրք-ռուսական պայմանագիրը փոխարինել թուրք-Եվրոպական տրակտատով⁶⁸: Եվ այս տեսակետից Բեռլինի տրակտատը «նոր իրավունք չէր ստեղծում, քանի որ Եվրոպայի կոլեկտիվ միջամտության իրավունքը՝ քրիստոնյաների պաշտպանության հարցում, գոյություն ուներ վաղուց»⁶⁹: Սակայն համե-

⁶⁵ Մշակ, 1878, N 116:

⁶⁶ ԳԱԹ, Գր. Արծրունու ֆ., N 27:

⁶⁷ Նույն տեղում, N 28:

⁶⁸ **Ролэн-Жекмен М. Г.**, *Армения, армяне и трактаты (Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, М., 1896, с. 37).*

⁶⁹ Նույն տեղում:

մատելով Բեռլինի տրակտատը Փարիզի 1856 թ. տրակտատի հետ՝ տեսնում ենք, որ այն ուներ մի էական առավելություն, քանի որ, ըստ Ռոլեն-ժեկմենի, սահմանում էր Թուրքիայի միջազգային պարտավորությունները⁷⁰: «61-րդ հոդվածը անգլիական դիվանագիտության վերաբերմունքի միայն սկիզբն էր, կարելի է ասել, Հայկական հարցի նկատմամբ: Հետագայում Հայկական հարցը խճճվեց և հայտնվեց այդ դիվանագիտության թակարդի մեջ», - գրել է Ռոլեն-ժեկմենը⁷¹:

Բեռլինի տրակտատի շնորհիվ Հայկական հարցը դադարեց Օսմանյան կայսրության ներքին հարց լինելուց, այլև վերածվեց ոչ միայն միջազգային հարցի, որի լուծման համար պատասխանատու էին Բեռլինի տրակտատը ստորագրող բոլոր պետությունները⁷², սակայն «ավելի լավ կլինեք ոչինչ չխոստանալ հոգուտ այդ ժողովրդի [հայերի], քան ավելացնել նրանց դժբախտություններին նաև չիրակա-նացած հույսերի դառնությունը»⁷³:

Մ. Մակկոլը նշում էր, որ 61-րդ հոդվածը մնաց իբրև մեռած տառ, քանի որ Բ. Դուռը մեծ տերություններին երբևիցե չհայտնեց որևէ տեղեկություն պայմանագրային պարտավորությունների կիրառման շուրջ այն հիմնավոր պատճառով, որ որևէ միջոց այդ ուղղությամբ նա չձեռնարկեց: Եվ այս ամոթալի փաստի համար պատասխանատվությունը կրում էր Անգլիան⁷⁴:

Ուսումնասիրելով թուրքական քաղաքականությունը՝ Մակկոլը եկել էր այն եզրահանգման, որ պետք չէ հիմնվել սուլթանի կամ Բ. Դռան հանդիսավոր խոստումների վրա՝ նկատելով, որ «թուրք պաշտոնյաները, սկսած սուլթանից, բազմախոստում մարդիկ են... նրանց դիվանագիտական արվեստը շոայլ խոստումների մեջ է, որոնք նրանք չեն էլ մտածում կատարել, և ստախոսության մեջ է, որն այնքան սովորական երևույթ է, որ դարձել է նրանց երկրորդ էությունը»⁷⁵:

Ֆ. Գրինի կարծիքով, 61-րդ հոդվածը և նրա հետ մեկտեղ անգլո-թուրքական համաձայնագիրը ոչ մի դեր չխաղացին հայերի համար որևէ բարեփոխումներ կատարելու առումով: Նա հանգում է այն կարծիքին, որ Հայաստանի վիճակը դրանից հետո դարձավ ավելի անհուսալի, քան 20 տարի առաջ, և այդ վիճակը պայմանավորված էր նշված տրակտատներով ու դրանք ստորագրած տերությունների հետագա գործողություններով⁷⁶:

⁷⁰ Նույն տեղում:

⁷¹ **Sarkissian A. O.**, նշվ. աշխ., էջ 74:

⁷² Նույն տեղում, էջ 45:

⁷³ Նույն տեղում, էջ 43:

⁷⁴ **Макколы М.**, *Ответственность Англии перед Арменией (Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г., с. 195)*.

⁷⁵ Նույն տեղում, էջ 199: Դեռ 1876 թ. դոկտոր Դելինգերը հայտարարեց, որ սխալ էր 1856 թ. Փարիզի դաշնագրում եվրոպական ազգերի մեջ ընդգրկել «բարբարոսական թուրքական կառավարությունը...[քանի որ] այս սխալը թուրքերի մեջ... ծնեց այն կեղծ համոզմունքը, որ իրենց ոչ պիտանի կառավարումը ընդմիջտ անհրաժեշտ է Եվրոպայում քաղաքական հավասարակշռություն պահպանելու համար» (նույն տեղում, էջ 208-209):

⁷⁶ **Грин Ф. Д.**, *Армянский кризис и владычество турок (Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г., с. 275)*.

Իրադարձությունների պատմական ընթացքը հայ ժողովրդին հանգեցրեց այն գիտակցության, որ իրենց դարավոր տառապանքներին վերջ է տրվում պատմական այս կարևորագույն վավերագրով, քանի որ սկսած 1878 թ.՝ հայկական բարեփոխումների հարցը ներքին թուրքական հարցից վերածվեց միջազգային հարցի... և հայ «ռայան» որպես իրավասու սուրբեկտ կարող է պահանջել իր իրավունքները, որոնք ճանաչված են միջազգային տրակտատով: Գր. Դինի կարծիքով, «Հայերի ճակատագրի համար բարոյական պատասխանատվության աղոտ զգացումը թելադրեց Բեռլինի տրակտատի 61-րդ հոդվածը, սակայն այդ զգացումը այնքան ուժեղ չէր, որպեսզի հնարավոր լիներ պնդել այդ հոդվածի իրագործումը»⁷⁷:

Ա. Ամֆիտատրովը հարում էր այն տեսակետին, որ Ռուսաստանը ձեռնպահ մնաց հայերի ճակատագրում. «Շրջանառության մեջ մտած արտահայտությունը՝ «Ռուսաստանը չի ցանկանում [տեսնել] երկրորդ Բուլղարիան», հանգեցրեց նրան, որ բոլոր այն աննշան բարեփոխումները, որոնցով Բեռլինի կոնգրեսը փոքրիկ արահետ էր մատնանշում հայ ժողովրդի ինքնավարության համար, վայրկենապես մատնվեցին մոռացության»⁷⁸: Այն, որ 61-րդ հոդվածը գործնականում չի կենսագործվի, մնալով տեսական կանխագծումների ոլորտում, պարզ էր շատերի համար: Հավանաբար, այդ գիտակցում էին նաև հոդվածի տակ իրենց ստորագրությունը դրած եվրոպական դիվանագետները: 61-րդ հոդվածը հայ ժողովրդի համար այն փրփուրն էր, որից բռնվում է խեղդվողը: Պատերազմում հաղթանակած Ռուսաստանը պարտվեց Բեռլինի վեհաժողովում, իսկ միջազգային դիվանագիտությունը հայերին կեղծ դրամ նետեց, ինչպես «մուրացկանի պարզած ձեռքը շրջանառությունից դուրս եկած դրամ են դնում»⁷⁹:

Աբդուլ-Համիդը պատկանում էր այն գործիչների շարքին, «որոնք ողջ կյանքի ընթացքում բոլորին ամեն ինչ զիջում են, բայց իրականում [նա] չէր զիջում երբեք և ոչ մեկին»⁸⁰: «Այդ մուսուլմանական Մաքիավելին» կարողացավ Հայաստանում անցկացվելիք բարեփոխումների հանդեպ նախատեսված միջազգային հսկողությունն օգտագործել իր շահերի համար: Քանի որ Փոքր Ասիան գտնվում էր մեծ տերությունների քաղաքական շահերի ոլորտում, ընդ որում, մեծ մասամբ հակասող շահերի, ապա տերություններից յուրաքանչյուրը ձգտում էր վերահսկել փոքրասիական քաղաքականությունը, որպեսզի այն չվնասի իրենց: Եվ այս փոխադարձ անվստահությունը՝ հայկական բարեփոխումների հարցում միջազգային դիվանագիտական առօրյայում, ձեռնտու էր Օսմանյան Թուրքիային, քանի որ եվրոպական կոնցերտի մրցակցությունն արգելակում էր հայերի կացության բարելավումը, և 61-րդ հոդվածը այդ իսկ պատճառով վերածվում էր մեռած տառի: Եվրոպական յուրաքանչյուր պետության մասնակցությունը բարեփոխումների հարցում հանգեցնում էր նրան, որ պետությունները ավելի շատ հետևում էին միմյանց գործողու-

⁷⁷ Диев Гр. А., *Армянский вопрос в Турции (из переписки со стамбульским публицистом)*, М., 1893, с. 435.

⁷⁸ Амфитеатров А. В., *Армянский вопрос*, СПб., 1906, с. 7.

⁷⁹ Նույն տեղում:

⁸⁰ Նույն տեղում, էջ 36:

թյուններին, քան բարեփոխումների իրականացմանը: Հայկական հարցի եվրոպական ու ռուսական վերահսկողությունը վերածվել էր վերահսկողության միմյանց նկատմամբ, որը ոչ մի արդյունք չէր ունենալու այդ նույն հարցի համար:

Բեռլինի կոնգրեսը, անշուշտ, «չի կարելի դիտել իբրև պետական կյանքում մի առանձին երևույթ, այն անպայման պիտի քննվի իրեն նախորդող իրադարձությունների կտրվածքով»⁸¹, որոնք և հանգեցրին վեհաժողովի գումարմանը, նշում է իր հուշերում Գ. Բոբրիկովը: Եվ կոնգրեսի որոշումները, բնականաբար, պայմանավորված էին դրան հասցրած պատմական դարաշրջանի տրամաբանությամբ:

Եվ այսպիսով, Բեռլինի կոնգրեսում իշխում էր մի ճշմարտություն՝ մեծ տերությունների պայքարը հանուն իրենց քաղաքական շահերի, և այդ պետություններից յուրաքանչյուրը, բացահայտ կամ գաղտնի, պայքարում էր հոգուտ իր հեռահար նպատակների: Բացահայտ էին Անգլիայի և Ռուսաստանի հակասությունները. «Առաջինը ձգտում էր նվազեցնել Ռուսաստանի գենքի փառահեղ հաղթանակի արդյունքները, երկրորդն էլ փորձում էր ամրապնդել իր նվաճումները»⁸²: Գերմանիան նույնպես ձգտում էր թուլացնել Ռուսաստանի դերը կոնգրեսում: Նրա քաղաքական նպատակն էր Օսմանյան Թուրքիայի տնտեսական էքսպանսիան: Անգլիան և Գերմանիան հայտնվել էին առճակատման մեջ՝ Միջագետքի հարցի շուրջ, պարզապես այդ հակամարտությունը ակնհայտ ձևով չէր դրսևորվում: Աջակցելով սուլթանին Հայկական հարցը ձախողելու գործընթացում՝ Գերմանիան հույսեր էր փայփայում, որ սուլթանը կսատարի իրեն հաստատվելու Փոքր Ասիայում:

Գերմանիային աջակցում էր Ավստրո-Հունգարիան, որպեսզի շեղի Գերմանիայի ուշադրությունը Բալկաններից: Իրականում «Անդրաշիի դեմարշը Հայկական հարցում գիտակցված էր և ուղղված էր Փոքր Ասիայում Ռուսաստանի դիրքերի հզորացման դեմ»⁸³: «Բեռլինի վեհաժողովի որոշումները զգալի չափով պայմանավորված էին կայզերական Գերմանիայով ի դեմս Օ. Բիսմարկի»⁸⁴, - եզրակացնում է Ստ. Ստեփանյանը, իսկ Գ. Բոբրիկովը Բիսմարկին անվանում է նույնիսկ Բեռլինի կոնգրեսի հեղինակ⁸⁵:

«Գերշահագրգիռ Անգլիան» կատարեց իր բոլոր պարտավորությունները, որոնք նա ստանձնել էր Օսմանյան կայսրության հանդեպ «ասիական գործերում»՝ Մոլսբերիի ջանքերով 16-րդ հոդվածը խմբագրելով 61-ի: «Բեռլինի կոնգրեսում Հայկական հարցը խլեցին Ռուսաստանի ձեռքից և հանձնեցին եվրոպական պետություններին»⁸⁶: Սակայն միամտություն կլիներ ապավինել միջազգային դիվանագիտու-

⁸¹ Бобриков Г., Воспоминание о Берлинском конгрессе (Русский вестник, 1889, т. 205, декабрь, с. 4).

⁸² Тунян В. Г., Россия и Армянский вопрос, Е., 1998, с. 83.

⁸³ Նույն տեղում, էջ 87:

⁸⁴ Степанян С. С., Армения в политике империалистической Германии (конец XIX- начало XX века), Е., 1975, с. 31.

⁸⁵ Бобриков Г., նշվ. աշխ., էջ 15:

⁸⁶ Степанян С. С., նշվ. աշխ., էջ 32:

թյան արդարամտությանը, քանի որ, որպես օրենք, միջազգային խնդիրները լուծվում են միայն շահի և ուժի դիրքերից:

Միջազգային իրավունքի օրենքներն այդպես էլ չգործադրվեցին Հայկական հարցում: Բեռլինի կոնգրեսի որոշումները ոչ միայն չկիրարկվեցին հայերի նկատմամբ, այլև շրջանցվեցին Արդուլ Համիդի կողմից, որը ձեռնարկեց հայերի զանգվածային կոտորածները: Փաստորեն, Եվրոպայի Հայկական հարցում բարոյական պատասխանատվություն վերցրեց իր վրա՝ քաջ գիտակցելով Օսմանյան Թուրքիայում նախատեսված բարեփոխումների անհուսալիությունը: Բեռլինի վեհաժողովից հետո՝ ստորագրությունների փոխանակման օրը, Բիսմարկը իր մոտ հրավիրեց օսմանյան լիազորներին և զրույցի ժամանակ նշեց, որ Թուրքիան գոհ պետք է լինի այն փաստից, որ Բեռլինի դաշնագրով կայսրությունը 20 տարով ապահովվեց խաղաղությամբ, ինչը հնարավորություն է ընձեռում երկրում վերափոխումներ իրագործել և բռնել առաջընթացի ուղին՝ հավելելով, որ դա Թուրքիայի փրկության վերջին «հավանականությունն է», սակայն ինքն անձամբ (Բիսմարկը - Գ. Հ.) համոզված է, որ Թուրքիան ոչինչ էլ չի ձեռնարկի⁸⁷:

Ինչպես Բեռլինի կոնգրեսի անարդյունավետությունն էր պայմանավորված տերությունների՝ դրան նախորդող քաղաքական անլուծելի հակասություններով, այնպես էլ Հայկական հարցի հետագա վայրիվերումները, իրենց հերթին, պետք է ընթանային այդ կոնգրեսի տրամաբանությամբ՝ իբրև քաղաքական ու դիվանագիտական հակասությունների ու բախումների հանգուցակետ և առաջիկա աղետների նախադուր:

ИТОГИ БЕРЛИНСКОГО КОНГРЕССА

АРУТЮНЯН Г. Г.

Резюме

Реформы, предусмотренные 61-ой статьей Берлинского конгресса – безопасность армянского населения, периодическое уведомление Б. Портой держав о проведении реформ, в том числе контроль последних в отношении их реализации так и не были претворены в жизнь.

Безрезультативность конгресса была обусловлена неразрешимыми политическими противоречиями держав. Исходя из этой данности, дальнейшие перипетии, связанные с Армянским вопросом, должны были развиваться по вышеупомянутой логике, подвергая армян тяжелым испытаниям.

⁸⁷ Կոլլիս Ժ., Գերմանացիները Կ. Պոլիս (Նոր կեսնք, Լոնտոն, 1898, N 19, էջ 293):